

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը  
ակադեմիկոս Մերգեյ Մերգելյանի ծննդյան 90-ամյակին նվիրված  
միջազգային գիտաժողովի կապակցությամբ (21.05.2018 թ.)

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

Ուրախ եմ ձեզ ողջունելու ակադեմիկոս Մերգեյ Մերգելյանի ծննդյան 90-ամյակին  
նվիրված միջազգային գիտաժողովի կապակցությամբ:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն խիստ կարևորում է գիտության ոլորտի հայ  
երախտավորներին հիշելու և ըստ արժանվույն մեծարելու խնդիրը:

Վաստակաշատ գիտնական և ճանաչված մտավորական Մերգեյ Մերգելյանի կյանքի  
տարեգրությունը արգասաբեր ու շնորհաշատ գիտնականի կենսագրություն է:

Հորելյանական այս միջոցառման կազմակերպիչների ցանկը բավականին մեծ է՝ ՀՀ ԳԱԱ  
նախագահություն, Մաթեմատիկայի ինստիտուտ, Ինֆորմատիկայի և ավտոմատացման  
պրոբլեմների ինստիտուտ, Երևանի պետական համալսարան, Հարավային Ֆլորիդայի  
համալսարան, Երևանի մաթեմատիկական մեթենաների գիտահետազոտական ինստիտուտ,  
Հայկական մաթեմատիկական միություն: Եվ սա միայն մի մասն է այն  
կազմակերպությունների, որոնց կայացման գործում նշանակալի ներդրում է ունեցել Մերգեյ  
Մերգելյանը՝ իր ֆենոմենալ կարողություններն անմնացորդ նվիրելով հայկական  
մաթեմատիկական գիտության զարգացմանը:

Անուրանալի է ակադեմիկոս Մերգելյանի վաստակը միջազգային ճանաչում ստացած  
հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի կայացման և հետագա զարգացման,  
ինչպես նաև Հայաստանում հաշվողական տեխնիկայի ու կիրառական տեխնիկայի զարգացման  
գործում: Մասնակցելով բազմաթիվ միջազգային գիտական հեղինակավոր միջոցառումների՝  
ակադեմիկոս Մերգելյանը ամենուր բարձրացրել է հայ գիտական մտքի հեղինակությունը: Եվ  
պատահական չէ, որ այժմ նրա հիշատակին նվիրված գիտաժողովին մասնակցում են  
գիտնականներ աշխարհի տարբեր մասերից:

Երկար տարիներ իր կյանքը կապելով Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ՝  
1956 թվականին Մերգելյանի մասնակցությամբ հիմնադրվեց Երևանի մաթեմատիկական  
մեթենաների գիտահետազոտական ինստիտուտը, որը նա ղեկավարեց 1956-60  
թվականներին: Նրա ջանքերի շնորհիվ ինստիտուտը կայացավ՝ ձեռքբերելով բարձր  
գիտական վարկանիշ ունեցող գիտական կազմակերպության համբավ: Եվ զուր չէ, որ

ինստիտուտի հայտնի ոչ պաշտոնական անվանումը՝ Մերգեյանի ինստիտուտ, պահպանվում է մինչ օրս :

Մերգեյանը հանդիսանում էր նախկին Խորհրդային Միության երիտասարդ գիտնականի սինվոլը՝ ԽՍՀՄ պատմության մեջ ամենաերիտասարդ գիտությունների դոկտորը:

Մերգեյանի բեղուն աշխատանքի գնահատականն է եղել ԽՍՀՄ տարիներին Ստալինյան մրցանակին արժանանալը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրվելը:

Հարգելի՛ մասնակիցներ,

Մեկ անգամ ևս ողջունում եմ Մերգեյ Մերգեյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառման մասնակիցներին և շնորհակալություն եմ հայտնում հանճարեղ գիտնականի հիշատակին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպիչներին:

Մաղթում եմ արդյունավետ և հաճելի աշխատանք:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ՝

Սամվել Հարությունյան